	Ծառայություններ /հոդված 5112/					

71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 40,42 և 44 շենքների բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	դրամ	752400	1	752,40
	Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ					
	Սպորտային միջոցառումներ/հոդված 4239/					
92621110	Սպորտային միջոցառուների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	11315000	1	11315.00
92621110	Սպորտային միջոցառուների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	12270400	1	12270.40
	Բաժին -08 խումբ -4 դաս-1 Երիտասարդական ծրագրեր					
	Ծառայություններ /հոդված 4239/					
79951100	Վանաձոր համայնքի կարիքների համար 2026 թվականի «Կանաչ էներգիա կայուն Վանաձոր» ծրագրի շրջանակներում կայուն էներգիայի օրերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	ԷԱճ	դրամ	1494300	1	1494.30
	Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն					
	մշակութային միջոցառումներ/հոդված 4239/					
79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ԷԱճ	դրամ	9508700	1	9508.7
79951110	<<Վանաձորի օր>> ավանդական համաքաղաքային միջոցառման կազմակերպման ծառայություններ	ԷԱՃ	դրամ	9750000	1	9750.00
	ծառայություն/4239/					
79951100	<<Լավ էլի>> խմբի 30-ամյակին նվիրված համերգի կազմակերպում	ՄԱ	դրամ	980000	1	980.00
	Բաժին -09 խումբ-01 դաս-01					
	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզ հասցեում նոր մասնաշենքի կառուցում **(սուբվենցիոն ծրագիր)**					
	Ծառայություն /հոդված 5112/					

71351540	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների տեխնիկական ծառայություն (համայնքի մասնաբաժին)	ԳՀ	դրամ	745800	1	745.8
98111140	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	*	1	*
98111140	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	1235000	1	1235.0
	Աշխատանք /հոդված 5112/					
45211228	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ (համայնքի մասնաբաժին)	ԲՄ	դրամ	57924000	1	57924.0
45211228	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման/2-րդ փուլ, ավարտում/ լրացուցիչ աշխատանքների ձեռքբերում	ՄԱ	դրամ	1703040	1	1703.04
	Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգիստ, մշակույթ և կրոն					
	մշակութային միջոցառումներ/հոդված 4239/					
79411210	գնումների գործավարական գործընթացի կազմակերպման ծառայություններ	ՄԱ	դրամ	600000	1	600.0
79951100	միջոցառումների հետ կապված ծառայություններ	ԷԱՃ	դրամ	11570000	1	11570.0
79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ՄԱ	դրամ	24800000	1	24800.0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում «Ջիպսի Քինքս» երաժշտական խմբի մասնակցություն	ՄԱ	դրամ	16000000	1	16000.0

79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում «Կարապետյաններ Բենդ» երաժշտական խմբի մասնակցություն	ՄԱ	դրամ	6000000	1	6000.0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում երգչուհի Իվետա Մուկուչյանի մասնակցություն	ՄԱ	դրամ	4400000	1	4400.0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում հաղորդավար Ռաֆայել Երանոսյանի մասնակցություն	ՄԱ	դրամ	1665000	1	1665.0
79951110	Ամանորի և Սուրբ Ծննդյան միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	ԷԱՃ	դրամ	19 365 000	1	19365.0

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

Գնումների բաժնի պետ՝ **Դավիթ Հակոբյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1879

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 7/21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Մամիկոնի Աղաջանյանի 25.08.2023թ. թիվ 02/14551 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30092026-06-0006 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 04 հունիսի 2026 թվականի թիվ 1106 որոշումը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ա. Իսահակյան փողոց 7/21 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 28.11քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 25.08քմ) ավտոտնակի համար 55350 (հիսունհինգ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 31.44քմ մակերեսով հողամասը 139660 (հարյուր երեսունինը հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Անդրանիկ Մամիկոնի Աղաջանյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Անդրանիկ Մամիկոնի Աղաջանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1880

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 141/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՒԶԱՆ ՌԱՖԻԿԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզան Ռաֆիկի Այվազյանի 25.12.2023 թվականի թիվ 02/23110 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28102026-06-0022 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 141/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 59.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 53.3քմ) ավտոտնակի համար 117750 (հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.9քմ մակերեսով հողամասը 132810 (հարյուր երեսուներկու հազար ութ հարյուր տասը) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռուզան Ռաֆիկի Այվազյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Ռուզան Ռաֆիկի Այվազյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1881

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑ 46/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԱԼԱ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լալա Գարսևանի Սարդարյանի 06.12.2023թ. թիվ 02/21729 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23102026-06-0094 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Գ. Լուսավորչի փողոց 46/15 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 13.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 12.3քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 13.9քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Լալա Գարսևանի Սարդարյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Լալա Գարսևանի Սարդարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 30 (երեսուն) դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1882

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 131/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱԼԵՐԻԿ ՂՈՒՐԲԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի 19.12.2023թ. թիվ 02/22728 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19102026-06-0031 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 131/6 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 20.53քմ) ավտոտնակի համար 41350 (քառասունմեկ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 21.0քմ մակերեսով հողամասը 93280 (իննսուներեք հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վալերիկ Ղուրբանի Գևորգյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Վալերիկ Ղուրբանի Գևորգյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1883

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՉԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՇԱՐՄԱՂ ՀՐԱՆՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շարմաղ Հրանտի Ղազարյանի 20.11.2023թ. թիվ 02/20372 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13102026-06-0068 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2025 թվականի թիվ 1767 որոշումը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ա. Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք 6/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 33.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 27.2քմ) ավտոտնակի համար 65570 (վաթսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 33.3քմ մակերեսով հողամասը 147920 (հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Շարմաղ Հրանտի Ղազարյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Շարմաղ Հրանտի Ղազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1884

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 2/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԼՈՒՍՏԻ ԿԱՐՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Գալուստի Կարոյանի 17.11.2023թ. թիվ 02/20239 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02102026-06-0029 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 07 սեպտեմբերի 2026 թվականի թիվ 1626 որոշումը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 2/11 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 31.89քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 25.76քմ) ավտոտնակի համար 86910 (ութսունվեց հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 31.89քմ մակերեսով հողամասը 335290 (երեք հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հովհաննես Գալուստի Կարոյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Հովհաննես Գալուստի Կարոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1885

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1788 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հարություն Ալեքսեյի Բաղրամյանի լիազորված անձ՝ Լաուրա Պարույրի Մայիլյանի և Հայկանուշ Ռոստոմի Բաղրամյանի 22.10.2026 թվականի թիվ 02/16748 դիմումը, 15.07.2026 թվականի թիվ 4715 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ՝ 763-20250711-67-9180221), 14 հոկտեմբերի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1788 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14092026-06-0048 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 14 հոկտեմբերի 2026 թվականի «Վանաձոր համայնք. Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 4-րդ փողոց 12 հասցեում գտնվող Հարություն Ալեքսեյի Բաղրամյանի և Հայկանուշ Ռոստոմի Բաղրամյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և նոր փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 1788 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հավելվածը փոխել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2. Որոշման 1-ին կետում «0.029408+0.004098:2=0.031457հա» թվերը փոխարինել «0.033506հա» թվերով և «244.18քմ» թվերը փոխարինել «254.35քմ» թվերով:

3. Որոշման 2-րդ կետում «0.028164+0.004098:2=0.030213հա» թվերը փոխարինել «0.028164հա» թվերով և «143.70քմ» թվերը փոխարինել «133.53քմ» թվերով:

4. Որոշման մեջից հանել «0.004098հա մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր համատեղ օգտագործման տակ» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1886

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 1-ԻՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Գրիշայի Վարդանյանի 13.10.2026 թվականի թիվ 02/16156 դիմումը, «ԱՐԱԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց 2-րդ նրբանցք, թիվ 1 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.087256 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. 0.087256 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1887

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-031-0043-0075) ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՌԱԶՄԻԿ ՄԱՑԱԿԻ ՊԱՊՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱԴԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Մացակի Պապյանի լիազորված անձ՝ Դոնարա Հակոբսիկի Պապյանի 02.10.2026 թվականի թիվ 02/15586 դիմումը, 30.07.2026թ. տրված թիվ 01ԱԱ1120890 (նոտարական ակտի կոդ՝ 549-20260811-67-10409667) լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 4614 թարգմանությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնք գյուղ Գուգարքի 24.09.2026թ. թիվ 188 քաղվածքը՝ գրանցված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշմամբ, «ՎԱՂԻՆԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով 31 դեկտեմբերի 1998 թվականի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում (ծածկագիր՝ 06-031-0043-0075) գտնվող 0.09053 հա մակերեսով հողամասի սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Ճանաչել Ռազմիկ Մացակի Պապյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում (ծածկագիր՝ 06-031-0043-0075) գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.09053 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր՝ 06-031-0043-0075) գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 6-րդ փողոց, 25/2 անասնաշենք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1888

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ, 2 ՇԵՆՔ, 45 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեոնիդ Սամվելի Չիլինգարյանի լիազ. անձ՝ Կարապետ Լևոնի Ստեփանյանի 09.10.2026 թվականի թիվ 02/15979 դիմումը, 31.07.2026թ. թիվ 4375 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260731-90-10366587), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 07.11.1992թ. թիվ 2088 ՀՍՍՀ Ժողովրդական դեպուտատների Կիրովականի Քաղսովետի գործկոմի միասնական օրդերը, 30.09.2026թ. թիվ 5860 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260827-84-10474038), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց, 2 շենք, 45 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Բ. Կնունյանց փողոց, 2 շենք, 45 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1889

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 56 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Հարութի Էվոյանի լիազորված անձ Արամ Հարութի Էվոյանի 28.12.2023թ. թիվ 02/23416 դիմումը, 07.12.2023 թվականին տրված թիվ 6980 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20231207-90-7533181),անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 20.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023RCP9XC), 22.10.2026 թվականի «ՆԱ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ N 151-00!123 եզրակացությունը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 56 շենքի հյուսիսային մասում գտնվող ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 22.2քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ընդհանուր ներքին մակերես 19.98քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղի թիվ 56 շենքի հյուսիսային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Շիրակի խճուղի, 60/7 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1890

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԻՉՈՒՐԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՆԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՆԻԿՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Իննա Ալեքսանդրի Նիկոյանի (ծնված՝ 14.01.1963թ.) 28.07.2026 թվականի թիվ 02/11508 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 06.10.2026 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7359 վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 763-20261006-84-10627075), 06.10.2026 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7358 վկայագիրը (նոտարական ակտի կոդ՝ 763-20261006-84-10627074), 29.04.2026 թվականի ՀՀ անունից Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գործ թիվ ԼԴ/1161/02/25 վճիռը, 04.09.1986 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 07.10.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1- 256/26 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց թիվ 21 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 440.0քմ և նրան կից 17.0քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1986-1998թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 457.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Իննա Ալեքսանդրի Նիկոյանի (ծնված՝ 14.01.1963թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց թիվ 21 հասցեի բնակելի տան

կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 440.0քմ մակերեսով հողամասին կից 17.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Իննա Ալեքսանդրի Նիկոյանի (ծնված՝ 14.01.1963թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց թիվ 21 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 457.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող 284.29քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ի. Միչուրինի փողոց, 21 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1891

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-031-0033-0004) ԳՏՆՎՈՂ ՌԻՄԱ ՀԱՅԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռիմա Հայկի Հարությունյանի 05.10.2026 թվականի թիվ 02/15625 դիմումը, 28.09.2026թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7079 (նոտարական ակտի կոդ՝ 763-20260927-84-10592886) վկայագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 675143 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր՝ 06-031-0033-0004) Ռիմա Հայկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 1-ին փողոց, 1-ին նրբանցք 4 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1892

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1505 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանիչկա Իսկանդարի Մանուկյանի 14.10.2026 թվականի թիվ 02/16247 դիմումը, 09.10.2026 թվականի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-09102026-06-0282 որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 օգոստոսի 2026 թվականի թիվ 1505 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրանյան փողոց թիվ 2/1 (պայմանական) հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Վանիչկա Իսկանդարի Մանուկյանի սեփականության իրավունքը ճանաչելու, փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1505 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հավելվածը փոխել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2. Որոշման վերնագիրը «տրամադրելու » բառից հետո լրացնել «հողամասի ճշտված սահմանները հաստատելու» բառերը

3. Որոշման նախաբանը «ղեկավարվելու» բառից հետո լրացնել «ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով» բառերով:

4. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին կետով.

«1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրանյան փողոց թիվ 2/1 (պայմանական) հասցեում կադաստրային ծածկագիրով 06-001-0285-0038 0.01217 մակերեսով

հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

5. Որոշման «1-ին» ,«2-րդ»,«3-րդ» կետերը կարդալ հետևյալ հաջորդականությամբ որպես «2-րդ»,«3-րդ» և «4-րդ» կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի Ն 1893

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-031-0062-0019) ԳՏՆՎՈՂ ԱՂԱԲԵԿ ԱՐԱՅԻԿԻ ԲԱԴԻԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աղաբեկ Արայիկի Բադիկյանի 14.08.2026 թվականի թիվ 02/12488 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09122025-06-0070 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր՝ 06-031-0062-0019) Աղաբեկ Արայիկի Բադիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք 94/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1894

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31 ՄԱՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 675 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կորյուն Ժորայի Զալինյանի (ծնված՝ 29.01.1956թ.) 31.08.2026 թվականի 02/13417 դիմումը, 15/07/2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-15072026-06-0224 որոշումը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, Վանաձոր համայնքի ղեկավարի 31 մարտի 2026 թվականի թիվ 675 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ,34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայքի ղեկավարի 31 մարտի 2026 թվականի «Վանաձոր քաղաքի Նարեկացու 3-րդ փակուղի 32 հասցեում գտնվող, Կորյուն Ժորայի Զալինյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունը օրինականացնելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու մասին:» թիվ 675 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով՝

2. 23.1քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման ճանապարհ 2 տնատիրությունների միջև, յուրաքանչյուրին 1/2 չափով (23.1:2) 11.55քմ համաձայն «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերի:

3. Որոշման «2, 3» կետերը կարդալ համապատասխանաբար, որպես «3, 4 կետեր»:

4. Որոշման հավելվածը փոխել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1895

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0038-0008) ԳՏՆՎՈՂ ՄԱՐԻՆԵ ՎԱՐԴԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարինե Վարդի Գասպարյանի (ծնված՝ 30.11.1962թ.) 30.09.2026թ. թիվ 02/15384 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1503416 վկայականը, «ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը ու մասնագիտական եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 12.10.2026թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-264/26 Ի եզրակացությունը, 15.07.2026թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026RS9ENN), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի ա), դ) ենթակետերով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր՝ 06-084-0038-0008) գտնվող, Մարինե Վարդի Գասպարյանին (ծնված՝ 30.11.1962թ.) սեփականության իրավունքով պատկանող 0.32179հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն «ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Ճանաչել օրինական Մարինե Վարդի Գասպարյանին (ծնված՝ 30.11.1962թ.)սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնքի գյուղ

Շահումյանում (ծածկագիր՝ 06-084-0038-0008) գտնվող ինքնակամ կառուցված 118.8քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 104.05քմ) բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն «ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Մարինե Վարդի Գասպարյանի (ծնված՝ 30.11.1962թ.) կողմից 118.8քմ ընդհանուր արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար սահմանված վճարը՝ 168940 (հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 2-րդ փողոց, 4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1896

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՅԱՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Սամվելի Հովսեփյանի 16.10.2026 թվականի թիվ 02/16418 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15052012-06-0117 վկայականը, 12.09.2026թ. ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-12092026-06-0163 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գայանե Սամվելի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող Թատերական փողոց թիվ 4 հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Թատերական փողոց, 4 շենք, 36 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 նոյեմբերի 2026 թվականի N 1897

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՄԱՅԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 919 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Սիմոնի Վարդումյանի լիազորված անձ՝ Մելինե Սեյրանի Կյուրեղյանի (ծնվ. 12.09.1987թ.) 22.07.2026 թվականի թիվ 02/11203 դիմումը, 16.07.2025 թվականի թիվ 4681 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ:763-20250716-79-9195486), 02.07.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-02072026-06-0275 որոշումը, 12 մայիսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 919 որոշումը, «Գասպար Վեքիլյան »ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայքի ղեկավարի 12 մայիսի 2026 թվականի «Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող սեփականաշնորհված բնակարնի (քոթեջի) զբաղեցրած հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Համլետ Սիմոնի Վարդումյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 919 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:
2. Որոշման 1-ին կետում «0,016675հա » թվերը փոխարինել «0,025060» թվերով:
3. Որոշման 2-րդ կետում «166,75 քմ» թվերը փոխարինել «250,60 քմ» թվերով և «տնատիրությունների միջև, Համլետ Սիմոնի Վարդումյանի բաժինը կազմում է 128,28քմ:» բառերը փոխարինել «տնատիրությունների՝ Հարություն Համլետի Շեկոյանի և Համլետ Սիմոնի Վարդումյանի միջև, որից Համլետ Սիմոնի Վարդումյանի բաժինը կազմում է 128,28քմ:» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի N 1898

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1526 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Համլետ Ամասիկի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Հասմիկ Վլադիմիրի Սաֆարյանի 23.10.2026 թվականի թիվ 02/16867 դիմումը, 15.10.2025 թվականի թիվ 7191 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20251015-90-9484110), 17 օգոստոսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1526 որոշումը, 22.10.2026 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-22102026-06-0037 որոշումը, 29.04.2026թ. թիվ 2763 լիազորագրի (նոտարական ակտի կոդ՝ 763-20260429-79-10044355) ուղղված տարբերակը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայքի ղեկավարի 17 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Նար-Դոսի փողոց թիվ 62 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Համլետ Ամասիկի Հովհաննիսյանի, Նարինե Ամասիկի Հովհաննիսյանի և Դավիթ Ամասիկի Հովհաննիսյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1526 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման վերնագրում, նախաբանում և 2-րդ կետում Նարինե Ամասիկի Հովհաննիսյանի անուն ազգանուն հայրանվան մեջ «Ամասիկի» հայրանունը փոխարինել «Համասիկի» հայրանունով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի N 1899

ՊԱՐԳԵՎ ՀՐԱՉՅԱՅԻ ՋԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզպետի կողմից 05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 01/111.3/08426-2026 գրությանը կից Վահագն Զավարյանի դիմումի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 06 հոկտեմբերի 2026 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա 2026 թվականի հոկտեմբերի 06-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Լոռու մարզպետի կողմից 05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 01/111.3/08426-2026 գրությանը կից Վահագն Զավարյանի դիմումի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 06.10.2026 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր քաղաքի Տարոն-4, Բելառուսների 8ա շենքի հարակից ընդհանուր օգտագործման տարածք հանդիսացող հողամասը Պարգև Զարգարյանի կողմից ինքնակամ օգտագործվում է:

2026 թվականի հոկտեմբերի 06-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2026 թվականի հոկտեմբերի 14-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել են Վահագն Զավարյանը և Պարգև Զարգարյանը (հիմք՝ փոստային հետադարձ ծանուցման անդորագիր թիվ AL0135886337AM, AL0135886125AM), սակայն չեն ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Ի պատասխան թիվ 76466 զեկուցագրի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժինը 2026 թվականի հոկտեմբերի 19-ի

զեկուցագրով հայտնել է, որ որ Տարոն 4, Բելառուսների թաղամաս, 8 ա շենքի հասցեում Պարգև Զարգարյանի կողմից հողամասի օգագործման փաստի լրացուցիչ ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի փետրվարի 14-ին Պարգև Զարգարյանին տրված «կցակառույցի կառուցում» շինթույլտվության համաձայն՝ նախագծով թույլատրվել է կատարել ընդլայնում՝ շենքի սպասարկման գոտու սահմաններում: Նախագծով թույլտարվել է կառուցել բետոնե հիմնասյուներ: Ըստ էության՝ վերաբերելի է միևնույն առարկային:

Լսման իրավունքը պահելու նպատակով կրկին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ 23 հոկտեմբերի 2026 թվականին, որին Վահագն Զավարյանը և Պարգև Զարգարյանը և ծանուցվել են (հիմք՝ փոստային հետադարձ ծանուցման անդորագիր թիվ AL0136009061AM, AL0136009129AM), սակայն Պարգև Զարգարյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Վահագն Զավարյանը ներկայանալով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ հիմք ընդունելով իր կողից 28 սեպտեմբերի 2026 թվականին Վանաձորի համայնքապետարան ներկայացրել է դիմում, ըստ որի խնդրում է տալ պատշաճ գնահատական, տվյալ հողատարածքում Պարգև Զարգարյանի կողմից զբաղեցրած և համայնքապետարանի կողմից հիշյալ հողատարածքի վրա շինթույլտվություն տալու փաստի առթիվ: Վահագն Զավարյանը հայտնել է նաև, որ վերոգրյալի կապակցությամբ իր համաձայնությունը չի տվել և խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ շենքի սպասարկման գոտի հանդիսացող և նաև շենքի սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողատարածքը սեփականատերերին՝ շենքի բնակիչներին, այդ թվում նաև իրեն վերադարձնելու ուղղությամբ:

Քանի որ միևնույն առարկայի վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 30-ին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից կայացվել է թիվ 2236 որոշումը և վերոգրյալ որոշումը բողոքարկվել է դատական կարգով և առկա է ուժի մեջ մտած դատական ակտ՝ սույն վարչական վարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն ենթակա է կարճման:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ, 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ

1. 06.10.2026 թվականին Պարգև Զարգարյանի նկատմամբ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարճել, քանի որ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության

հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2026 թվականի N 1900

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1587 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 10.07.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ (Կ-10072026-06-0230) որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 09.07.2025 թվականի թիվ 1587 որոշումը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով ***որոշում եմ.***

